

**«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՌԱԴԻՈԴԵՏԱԼՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-12/22/01/007**

ք. Մեծամոր

«\_\_\_» \_\_\_\_\_ 2022թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանի, որը գործում է «ՀԱԷԿ» ՓԲԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և

«Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արա Օհանյանի, որը գործում է «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## **1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **ռադիոդետալները** (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

## **2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրից ավելի**:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրից ավելի**:

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

## **2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

## **2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

## **2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է **8975000 (ութե միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:**

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) 30 օրացուցային օրվա ընթացքում (ներառյալ վաղաժամկետ մատակարարման դեպքերը):

#### **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օրը**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

#### **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

### ԳՆՈՐԴ

#### «ՀԱԷԿ» ՓԲԸ

0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,  
Հ/Հ 1930000199200100  
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,  
ՀՎՀՀ 04401874,  
Հեռ./Ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,  
Հեռ.՝ 20-04-91, 33-40  
E-mail: [anpp@anpp.am](mailto:anpp@anpp.am)

### ՎԱՃԱՌՈՂ

#### «Սմարթ Էլեկտրոնիկս » ՍՊԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ  
Ծակքար, 1-ին փ., տ. 12  
Հ/Հ 2500010347510100  
Արմավիսբանկ ՓԲԸ,  
ՀՎՀՀ 02262902,  
Հեռ.՝ 098-02-03-04;  
E-mail: [yerevan.electro@gmail.com](mailto:yerevan.electro@gmail.com)

..... **Է. Մարտիրոսյան**  
Կ.Տ.

..... **Ա. Օհանյան**  
Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ապրանքի			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	ամբողջական անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	31711100	Կոնդենսատոր	<p>1.1 Կոնդենսատոր <b>МБГО-2-600-15 ТУОЖО 462.073</b> - 8 հատ;</p> <p>1.2 Կոնդենսատոր <b>МБГО-2-160-30 ТУОЖО 462.073</b> - 6 հատ;</p> <p>1.3 Կոնդենսատոր <b>МБГО-2-300-30±10% ТУОЖО 462.073</b> - 8 հատ;</p> <p>1.4 Կոնդենսատոր <b>470мкФx25 В (-40 +105°С)</b> - 200 հատ;</p> <p>1.5 Կոնդենսատոր <b>1000мкФx25 В (-40 +105°С)</b> - 150 հատ;</p> <p>1.6 Կոնդենսատոր <b>1800мкФx16 В (-40 +105°С)</b> - 10 հատ;</p> <p>1.7 Կոնդենսատոր <b>10мкФx100 В (-40 +105°С)</b> - 150 հատ;</p> <p>1.8 Կոնդենսատոր <b>22м кФ x100 В (-40 +105°С)</b> - 100 հատ;</p> <p>1.9 Կոնդենսատոր <b>47мкФ x63 В (-40 +105°С)</b> - 110 հատ;</p> <p>1.10 Կոնդենսատոր <b>220мкФ x25 В (-40 +105°С)</b> - 90 հատ;</p> <p>1.11 Կոնդենսատոր <b>10мкФx450 В (-40 +105°С)</b> - 50 հատ;</p> <p>1.12 Կոնդենսատոր <b>22мкФx450 В (-40 +105°С)</b> - 50 հատ;</p> <p>1.13 Կոնդենսատոր <b>1000мкФ x16 В (-40 +105°С)</b> - 200 հատ;</p> <p>1.14 Կոնդենսատոր <b>8мкФx450 В (-40 +105°С)</b> (անբևեռ) - 4 հատ;</p> <p>1.15 Կոնդենսատոր <b>10мкФx450 В (-40 +105°С)</b> (անբևեռ) - 4 հատ ;</p> <p>1.16 Կոնդենսատոր <b>470мкФ x16 В (-40 +105°С)</b> - 100 հատ;</p> <p>1.17 Կոնդենսատոր <b>1000мкФ x10 В (-40 +105°С)</b> - 150 հատ;</p> <p>1.18 Կոնդենսատոր <b>1000мкФ x50 В (-40 +105°С)</b> - 100 հատ;</p> <p>1.19 Կոնդենսատոր <b>2200мкФ x10 В (-40 +105°С)</b> - 150 հատ;</p> <p>1.20 Կոնդենսատոր <b>2200мкФ x16 В (-40 +105°С)</b> - 120 հատ;</p> <p>1.21 Կոնդենսատոր <b>1500мкФ x10 В (-40 +105°С)</b> - 150 հատ;</p> <p>1.22 Կոնդենսատոր <b>1500мкФ x16 В (-40 +105°С)</b> - 100 հատ;</p> <p>1.23 Կոնդենսատոր <b>3300мкФ x10 В (-40 +105°С)</b> - 150 հատ;</p> <p>1.24 Կոնդենսատոր <b>3300мкФ x16 В (-40 +105°С)</b> - 100 հատ;</p> <p>1.25 Կոնդենսատոր <b>h-20, d-7, 35 В 330мкФ</b> - 50 հատ;</p> <p>1.26 Կոնդենսատոր <b>h-20, d-7, 16В 1500мкФ</b> - 100 հատ;</p> <p>1.27 Կոնդենսատոր <b>h-25, d-10, 10В 3300мкФ</b> - 100 հատ;</p> <p>1.28 Կոնդենսատոր <b>h-15, d-7, 10В 1000мкФ</b> - 100 հատ;</p> <p>1.29 Կոնդենսատոր <b>К 50-7, 200 мкФ ; 400В</b> - 20 հատ;</p> <p>1.30 Կոնդենսատոր <b>К 50-7, 200 мкФ ; 100В</b> - 30 հատ;</p> <p>1.31 Կոնդենսատոր <b>К50-68; 22мкФ ; 250 В</b> - 30 հատ;</p> <p>1.32 Կոնդենսատոր <b>К50-68; 100мкФ ; 450 В</b> - 10 հատ;</p> <p>1.33 Կոնդենսատոր <b>К 50-35;25 В; 1000мкФ</b> - 30 հատ;</p> <p>1.34 Կոնդենսատոր <b>К 50-35;25 В; 220мкФ</b> - 30 հատ;</p>

		<p>1.35 Կոնդենսատոր <b>K 50-35;25 B; 22մկՓ</b> - 10 հատ;</p> <p>1.36 Կոնդենսատոր <b>K 50-35;100 B; 2.2մկՓ</b> - 10 հատ;</p> <p>1.37 Կոնդենսատոր <b>K 50-35;50 B; 100մկՓ</b> - 35 հատ;</p> <p>1.38 Կոնդենսատոր <b>K73-17; 0,1մկՓ x630 B</b> - 100 հատ;</p> <p>1.39 Կոնդենսատոր <b>K50-35 СapXon</b> շարք HP կոշտ թիթեղային ելքերով 63 B, 4700 մկՓ - 40 հատ;</p> <p>1.40 Կոնդենսատոր <b>МБГЧ-1-1-2Б-1000В, 0,5 мкФ</b> - 10 հատ;</p> <p>1.41 Կոնդենսատոր <b>K 50-68; 63В; 2200մկՓ</b> - 20 հատ;</p> <p>1.42 Կոնդենսատոր <b>4700մկֆx50В</b> - 30 հատ</p> <p>1.43 Կոնդենսատոր <b>1000մկֆx35В</b> - 50 հատ;</p> <p>1.44 Կոնդենսատոր <b>100մկֆx50В</b> - 200 հատ;</p> <p>1.45 Կոնդենսատոր <b>100մկֆx250В</b> - 100 հատ;</p> <p>1.46 Կոնդենսատոր <b>220մկֆx35В</b> - 200 հատ;</p> <p>1.47 Կոնդենսատոր <b>220մկֆx50В</b> - 30 հատ;</p> <p>1.48 Կոնդենսատոր <b>220մկֆx16В</b> - 50 հատ;</p> <p>1.49 Կոնդենսատոր <b>470մկֆx50В</b> - 200 հատ</p> <p>1.50 Կոնդենսատոր <b>4,7մկֆx16В</b> - 50 հատ</p> <p>1.51 Կոնդենսատոր <b>10մկֆx25В</b> - 30 հատ</p> <p>1.52 Կոնդենսատոր <b>10մկֆx100В</b> - 50 հատ</p> <p>1.53 Կոնդենսատոր <b>20մկֆx25В</b> - 50 հատ</p> <p>1.54 Կոնդենսատոր <b>20մկֆx100В</b> - 50 հատ</p> <p>1.55 Կոնդենսատոր <b>Км 4а - М75 - 750пФ</b> - 50 հատ</p> <p>1.56 Կոնդենսատոր <b>Км 4а - М47 - 430пФ</b> - 50 հատ</p> <p>1.57 Կոնդենսատոր <b>Км 4а - М47 - 510пФ</b> - 50 հատ</p> <p>1.58 Կոնդենսատոր <b>БМ-2-200-6800пФ</b> - 20 հատ</p> <p>1.59 Կոնդենսատոր <b>КОПБ-6-100мкф</b> - 50 հատ;</p> <p>1.60 Կոնդենսատոր <b>КМ5а-М75-680пф</b> - 30 հատ</p> <p>1.61 Կոնդենսատոր <b>КМ56-М75-2200пф</b> - 30 հատ;</p> <p>1.62 Կոնդենսատոր <b>КМ56-Н30-0,033мкф</b> - 30 հատ</p> <p>1.63 Կոնդենսատոր <b>КМ56-М75-390пф</b> - 40 հատ</p> <p>1.64 Կոնդենսատոր <b>К10-7В- Н30-2200пф</b> - 20 հատ</p> <p>1.65 Կոնդենսատոր <b>КМ-6-Н90-0,68мкф</b> - 30 հատ</p> <p>1.66 Կոնդենսատոր <b>К10-7В-Н30-0,01мкф</b> - 20 հատ</p> <p>1.67 Կոնդենսատոր <b>К10У-5-25-0,1-Н50</b> - 50 հատ</p> <p>1.68 Կոնդենսատոր <b>К52-3-50-200мкф</b> - 20 հատ</p> <p>1.69 Կոնդենսատոր <b>МБМ-500-0,25мкф</b> - 40 հատ</p> <p>1.70 Կոնդենսատոր <b>ДПС 450В 50мкФ</b> - 2 հատ</p> <p>1.71 Կոնդենսատոր <b>К50-35 100В 2.2մկՓ</b> - 20 հատ</p> <p>1.72 Կոնդենսատոր <b>К50-35 100В 4.7մկՓ</b> - 20 հատ</p> <p>1.73 Կոնդենսատոր <b>К50-35 50В 100մկՓ</b> - 20 հատ</p> <p>1.74 Կոնդենսատոր <b>К50-35 25В 100մկՓ</b> - 40 հատ</p> <p>1.75 Կոնդենսատոր <b>К50-35 16В 100մկՓ</b> - 40 հատ</p>
2	31711100	<p><b>խտարար էլեկտրոլիտային</b></p> <p>2.1 Կոնդենսատոր (խտարար էլեկտրոլիտային) - 50 հատ; 1800 մկֆ x 6,3 վ, Աշխատանքային ջերմաստիճանը C - 40...+105; Թույլատրվող շեղումը՝ ±5%; Իրանը՝ dip</p> <p>2.2 Կոնդենսատոր (խտարար էլեկտրոլիտային) - 50 հատ; 1000 մկֆ x 10 վ Աշխատանքային ջերմաստիճանը C - 40...+105; Թույլատրվող շեղումը՝ ±5%; Իրանը՝ dip</p> <p>2.3 Կոնդենսատոր (խտարար էլեկտրոլիտային) - 50 հատ (ատк); 22 մկֆ x 16 վ Աշխատանքային ջերմաստիճանը</p>



		<p>2.26 Կոնդենսատոր (խտարար էլեկտրոլիտային) - 50 հատ; 680 մկՖ x 200 վ Աշխատանքային ջերմաստիճանը C - 40...+105; Թույլատրվող շեղումը՝ ±5%; Իրանը՝ dip</p> <p>2.27 Կոնդենսատոր (խտարար էլեկտրոլիտային) - 50 հատ; 220մկՖ x 200 վ Աշխատանքային ջերմաստիճանը C - 40...+105; Թույլատրվող շեղումը՝ ±5%; Իրանը՝ dip</p> <p>2.28 Կոնդենսատոր (խտարար էլեկտրոլիտային) - 50 հատ; 47 մկՖ x 400 վ Աշխատանքային ջերմաստիճանը C - 40...+105; Թույլատրվող շեղումը՝ ±5%; Իրանը՝ dip</p> <p>2.29 Կոնդենսատոր (խտարար էլեկտրոլիտային) - 50 հատ; 100 մկՖ x 400 վ Աշխատանքային ջերմաստիճանը C - 40...+105; Թույլատրվող շեղումը՝ ±5%; Իրանը՝ dip</p> <p>2.30 Կոնդենսատոր (խտարար էլեկտրոլիտային) - 50 հատ; 270մկՖ x 400 վ Աշխատանքային ջերմաստիճանը C - 40...+105; Թույլատրվող շեղումը՝ ±5%; Իրանը՝ dip</p> <p>2.31 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>K15-5 1.5кВ 2200пФ H20</b> - 30 հատ;</p> <p>2.32 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>K15-5 1.5кВ 3300пФ H20</b> - 30 հատ;</p> <p>2.33 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>K15-5 1.5кВ 6800пФ H20</b> - 30 հատ;</p> <p>2.34 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>0,22 мкф x 400в</b> - 40 հատ;</p> <p>2.35 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>0,33 мкф x 400в</b> - 40 հատ;</p> <p>2.36 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>0,47 мкф x 400в</b> - 40 հատ;</p> <p>2.37 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>20 мкФ x 450 в CBB65</b> - 20 հատ;</p> <p>2.38 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>30 мкФ x 450 в CBB65</b> - 20 հատ;</p> <p>2.39 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>35 мкФ x 450 в CBB65</b> - 20 հատ;</p> <p>2.40 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>40 мкФ x 450 вCBB65</b> - 20 հատ;</p> <p>2.41 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>45 мкФ x 450 в CBB65</b> - 20 հատ;</p> <p>2.42 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>50 мкФ x 450 в CBB65</b> - 20 հատ;</p> <p>2.42 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>60 мкФ x 450 в CBB65</b> - 20 հատ;</p> <p>2.43 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>40 + 1.5 мкФ x 450 в CBB65</b> - 20 հատ;</p> <p>2.44 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>45 + 1.5 мкФ x 450 в CBB65</b> - 20 հատ;</p> <p>2.45 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>50 + 1.5 мкФ x 450 с CBB65</b> - 20 հատ;</p> <p>2.46 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>40 + 2 мкФ x 450 в CBB65</b> - 20 հատ;</p> <p>2.47 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>45 + 2 мкФ x 450 в CBB65</b> - 20 հատ ;</p> <p>2.48 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>50 + 2 мкФ x 450 с CBB65</b> - 20 հատ;</p> <p>2.49 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>1,5 мкФ x 450 в CBB61</b> - 20 հատ;</p> <p>2.50 Կոնդենսատոր (խտարար ոչ բևեռային) <b>2 мкФ x 450 в CBB61</b> - 20 հատ:</p>
7	31711100	<p><b>Միկրոսխեմա</b></p> <p>7.1 Միկրոսխեմա <b>KP293KП1В</b> կամ <b>PVT412L</b> - 5 հատ;</p> <p>7.2 Միկրոսխեմա <b>K561ЛA7</b> - 10 հատ;</p> <p>7.3 Միկրոսխեմա <b>K561ИE14</b> - 15 հատ;</p> <p>7.4 Միկրոսխեմա <b>K561ТM2</b> - 10 հատ</p> <p>7.5 Միկրոսխեմա <b>K561ТM1</b> - 10 հատ;</p> <p>7.6 Միկրոսխեմա <b>564ТM2</b> - 10 հատ;</p> <p>7.7 Միկրոսխեմա <b>564ТЛ1</b> - 10 հատ;</p> <p>7.8 Միկրոսխեմա <b>KP544УД1Б</b> - 5 հատ;</p> <p>7.9 Միկրոսխեմա <b>KP544УД1А</b> - 30 հատ;</p> <p>7.10 Միկրոսխեմա <b>K122УН1Г</b> - 5 հատ;</p> <p>7.11 Միկրոսխեմա <b>TECHNOLOGIES CONVERTER IMB60T240515</b> - 5 հատ;</p> <p>7.12 Միկրոսխեմա <b>KP572ПВ2</b> - 5 հատ;</p> <p>7.13 Միկրոսխեմա <b>KP142EH5A</b>- 5 հատ;</p> <p>7.14 Միկրոսխեմա <b>МОС3081</b> - 20 հատ;</p> <p>7.15 Միկրոսխեմա <b>NCP1200D60 (smd)</b> - 15 հատ;</p>

			<p>7.16 Միկրոսխեմա <b>NCP1203D60 (SMD)</b> - 15 հատ;</p> <p>7.17 Միկրոսխեմա <b>NCP1203D60 (DIP)</b>- 15 հատ;</p> <p>7.18 Միկրոսխեմա <b>203D կամ զեննրատոր (или генератор) NCP1203D100 (smd)</b> - 15 հատ;</p> <p>7.19 Միկրոսխեմա <b>203D կամ զեննրատոր (или генератор) NCP1203D100 (DIP)</b> - 15 հատ;</p> <p>7.20 Միկրոսխեմա <b>LM324 (smd)</b> - 15 հատ;</p> <p>7.21 Միկրոսխեմա <b>LM324 (DIP)</b> - 15 հատ;</p> <p>7.22 Միկրոսխեմա <b>LM339 (smd)</b> - 15 հատ;</p> <p>7.23 Միկրոսխեմա <b>LM358 (smd)</b>- 15 հատ;</p> <p>7.24 Միկրոսխեմա <b>LM494 (smd)</b>- 15 հատ;</p> <p>7.25 Միկրոսխեմա <b>ULN2003 (smd)</b> - 20 հատ;</p> <p>7.26 Միկրոսխեմա <b>ULN2004 (smd)</b> - 20 հատ;</p> <p>7.27 Միկրոսխեմա <b>ULN2005 (smd)</b> - 20 հատ;</p> <p>7.28 Միկրոսխեմա <b>TDA1085</b> - 5 հատ;</p> <p>7.29 Միկրոսխեմա <b>SD6835B</b> - 20 հատ;</p> <p>7.30 Միկրոսխեմա <b>TNY279PN</b> - 20 հատ;</p>
8	31711100	Դիոդ	<p>8.1 Դիոդ <b>RHRP3060 TO220-2, 30 A, 600 B</b>– 16 հատ;</p> <p>8.2 Դիոդ <b>КД 213</b> – 20 հատ;</p> <p>8.3 Դիոդ <b>1N 4007</b> – 200 հատ;</p> <p>8.4 Դիոդ <b>Д242Б 10А</b> – 10 հատ;</p> <p>8.5 Դիոդ <b>Д246Б 10А</b> – 10 հատ;</p> <p>8.6 Դիոդ <b>Semikron SKR 320/12</b> – 2 հատ;</p> <p>8.7 Դիոդ <b>1.5 KE30CA</b> – 10 հատ;</p> <p>8.8 Դիոդ Լույսային, 5մմ սպիտակ– 50 հատ;</p> <p>8.9 Դիոդ Լույսային, 5մմ կարմիր– 50 հատ;</p> <p>8.10 Դիոդ Լույսային, 5մմ կանաչ– 50 հատ;</p> <p>8.11 Դիոդ <b>HER107</b>– 20 հատ;</p> <p>8.12 Դիոդ <b>HER207</b>– 20 հատ;</p> <p>8.13 Դիոդ <b>HER157</b>– 20 հատ;</p> <p>8.14 Դիոդ <b>HER 257</b>– 20 հատ;</p> <p>8.15 Դիոդ <b>6A05</b>– 30 հատ;</p> <p>8.16 Դիոդ <b>1N4148</b>– 30 հատ;</p> <p>8.17 Դիոդ <b>1N4007</b>– 30 հատ;</p> <p>8.18 Դիոդ <b>SM4007 (SMD)</b>– 15 հատ;</p> <p>8.19 Դիոդ <b>BYC10-600 (2-lead TO-220AC)</b>– 20 հատ;</p> <p>8.20 Դիոդ <b>1N4148W (SMD), SOD-123</b>– 50 հատ;</p> <p>8.21 Դիոդ <b>FR301</b>– 30 հատ;</p> <p>8.22 Երկէլեկտրոդ Диод Шоттки <b>SB560 DO-201AD</b>– 40 հատ;</p> <p>8.23 Երկէլեկտրոդ Диод Шоттки <b>VS-50SQ100</b>– 40 հատ;</p> <p>8.24 Երկէլեկտրոդ Диод Шоттки <b>MBRS260T3G</b> – 15 հատ;</p> <p>8.25 Երկէլեկտրոդային կամուրջ Диодный мост <b>2Д906А</b>– 30 հատ;</p> <p>8.26 Երկէլեկտրոդային կամուրջ Диодный мост <b>W10M</b> – 30 հատ;</p> <p>8.27 Երկէլեկտրոդային կամուրջ Диодный мост <b>КВР06М</b>– 30 հատ;</p> <p>8.28 Երկէլեկտրոդային կամուրջ Диодный мост <b>КВР210</b>– 30 հատ;</p> <p>Երկէլեկտրոդային կամուրջ Диодный мост <b>D3SBA60</b>– 30 հատ;</p> <p>8.29 Երկէլեկտրոդային կամուրջ Диодный мост <b>BU1010</b>– 30 հատ;</p> <p>8.30 Երկէլեկտրոդային կամուրջ Диодный мост <b>КВРС5010</b>– 30 հատ;</p>

			8.31 Դիոդային կամուրջ Диодный мост MCIGICM , 25 A, 1000 B– 18 հատ; 8.32 Դիոդային կամուրջ КЦ402Д – 8 հատ; 8.33 Կվարցային ռեզոնատոր Кварцевый резонатор 4.0 մՀց (мГц) – 8 հատ; 8.34 Կվարցային ռեզոնատոր Кварцевый резонатор 8.0 մՀց (мГц) – 8 հատ; 8.35 Կվարցային ռեզոնատոր Кварцевый резонатор 12.0 մՀց (мГц) – 8 հատ; 8.36 Կվարցային ռեզոնատոր 16.0 մՀց(мГц) – 8 հատ; 8.37 Կվարցային ռեզոնատոր 20.0 մՀց(мГц) – 8 հատ; 8.38 Կվարցային ռեզոնատոր 24.0 մՀց(мГц) – 8 հատ; 8.39 Փակվող հերմիտիկ Геркон замыкающий КЭМ-6 Б խմբի– 50 հատ:
--	--	--	--

**Լրացուցիչ պայմաններ՝**

- Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, պետք է ունենան որակի հավաստագիր կամ անձնագիր, լինեն գործարանային փաթեթավորմամբ, իսկ խորհրդային արտադրության ռադիոդետրալների համար որակի հավաստագիր կամ անձնագիր ներկայացնել պետք չէ: Բոլոր առաջարկվող համարժեք փաթեթակները նախօրոք համաձայնեցնել Պարվիրաբուի հետ, քանի որ հնարավոր է լինեն չափսերի, պարամետրերի և այլ անհամապատասխանություններ: Փաստաթղթերը պետք է թարգմանված լինեն հայերեն կամ ռուսերեն լեզուներով:

**ԳՆՈՐԴ**

**«ՀԱԷԿ» ՓԲԸ**

0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,  
 Հ/Հ 1930000199200100  
 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,  
 ՀՎՀՀ 04401874,  
 Հեռ./ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,  
 Հեռ.՝ 20-04-91, 33-40  
 E-mail: [anpp@anpp.am](mailto:anpp@anpp.am)

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Սմարթ Էլեկտրոնիկս » ՍՊԸ**

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ  
 Ծակքար, 1-ին փ., տ. 12  
 Հ/Հ 2500010347510100  
 Արմավիրսանկ ՓԲԸ,  
 ՀՎՀՀ 02262902,  
 Հեռ.՝ 098-02-03-04;  
 E-mail: [yerevan.electro@gmail.com](mailto:yerevan.electro@gmail.com)

..... **Է. Մարտիրոսյան**  
 Կ.Տ.

..... **Ա. Օհանյան**  
 Կ.Տ.

**ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

<b>Ապրանքի</b>							
չ/հ	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Չափման միավոր	ընդհանուր քանակը	Մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	-	<b>3980000</b>	դրամ	4747	Արմավիրի մարզ ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ	4747	Պայմանագրի կնքման օրվանից <b>60 օրվա</b> <b>ընթացքում</b>
2	-	<b>3170000</b>	դրամ	4040		4040	
7	-	<b>240000</b>	դրամ	400		400	
8	-	<b>1585000</b>	դրամ	1132		1132	

**ԳՆՈՐԴ  
 «ՀԱԷԿ» ՓԲԸ**

0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,  
 Հ/Հ 1930000199200100  
 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,  
 ՀՎՀՀ 04401874,  
 Հեռ./Ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,  
 Հեռ.՝ 20-04-91, 33-40  
 E-mail: [anpp@anpp.am](mailto:anpp@anpp.am)

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Սմարթ Էլեկտրոնիկս » ՍՊԸ**

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ  
 Ծակքար, 1-ին փ., տ. 12  
 Հ/Հ 2500010347510100  
 Արմավիրի մարզի ՓԲԸ,  
 ՀՎՀՀ 02262902,  
 Հեռ.՝ 098-02-03-04;  
 E-mail: [yerevan.electro@gmail.com](mailto:yerevan.electro@gmail.com)

..... **Է. Մարտիրոսյան**  
 Կ.Տ.

..... **Ա. Օհանյան**  
 Կ.Տ.

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

«Ն» դրամ

		<b>Ապրանքի</b>													
		դիմաց վճարումները նախատեսվում է հրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	31711100	<b>Կոնդենսատոր</b>			3980000	3980000	3980000	3980000	3980000	3980000	3980000	3980000	3980000	3980000	<b>3980000</b>
2	31711100	<b>խտարար էլեկտրոլիտային</b>			3170000	3170000	3170000	3170000	3170000	3170000	3170000	3170000	3170000	3170000	<b>3170000</b>
7	31711100	<b>Միկրոսխեմա</b>			240000	240000	240000	240000	240000	240000	240000	240000	240000	240000	<b>240000</b>
8	31711100	<b>Դիող</b>			1585000	1585000	1585000	1585000	1585000	1585000	1585000	1585000	1585000	1585000	<b>1585000</b>
<b>Ընդամենը՝</b>														<b>8975000</b>	

\*Վճարումը կկատարվի փաստացի մատակարարված ապրանքների հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, Պարզաբանության կողմից հաստատվելուց հետո (այդ թվում վաղաժամկետ մատակարարման դեպքում) 30 օրացուցային օրվա ընթացքում:

**ԳՆՈՐԴ**  
**«ՀԱԷԿ» ՓԲԸ**  
0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,  
Հ/Հ 1930000199200100  
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,  
ՀՎՀՀ 04401874,  
Հեռ./Ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,  
Հեռ.՝ 20-04-91, 33-40  
E-mail: [anpp@anpp.am](mailto:anpp@anpp.am)

..... **Է. Մարտիրոսյան**  
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՂ**  
**«Սմարթ Էլեկտրոնիկս » ՍՊԸ**  
«Չ Գեղարքունիքի մարզ, գյուղ  
Ծակքար, 1-ին փ., տ. 12  
Հ/Հ 2500010347510100  
Արմավիրսքանկ ՓԲԸ,  
ՀՎՀՀ 02262902,  
Հեռ.՝ 098-02-03-04;  
E-mail: [yerevan.electro@gmail.com](mailto:yerevan.electro@gmail.com)

..... **Ա. Օհանյան**  
Կ.Տ.

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «\_\_\_» «\_\_\_\_\_» 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

**ԱԿՏ N \_\_\_\_**

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Գնորդ) և \_\_\_\_\_  
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը  
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը  
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
Ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն